

LIPANAN

Journal Arménien

POLITIQUE - LITTÉRAIRE

RÉDACTION - ADMINISTRATION

Place des Canons, 9, Rue d'Italie

BEYROUTH «Liban»

ԼԻԲԱՆԱՆ

Ազգային - Փաղափական - Գրական

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

جريدة ارمينية سياسية ادبية اقتصادية حرّة (Liban)

2 ՈՐԵՔԵԱՐԹԻ

8

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1930

Բ Ա Տ Ե Գ Ի Ն

ՈՒՌԻԱ—	ՏՐԿԱՆ.	ՎԵՐԱՄՈՒՐ.	ԵՆԱՄԱՐ.
	350	175	125
ԱՐՏԱՍԱՀԱՄԱՐ	6	4	2 ՏՈՒՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿՈՒՆՔՆԵՐ

ԳԵՐՄԱՆ ԸՆԴՎԱԶՈՒՄԸ (Գ.)

Զօր. Վեյկան կը յայտարարէ թէ 1932ին Գերմանիա կ'ունենայ, լաւագոյն կերպով սպառազինուած ու կազմակերպուած քառորդ միլիոն-նոց հսկայ ոյժ մը որու 100 հազարը կամաւորական բանակի իսկ 150,000ը ոստիկանական ոյժի (Սթուփ) մէջ: Հարկ կայ յիշել թէ ոստիկանական կազմը օժտուած է հեծելախելի, ինքնաշարժի, օդանաւի, ծովային և յամա-քային սպառակաւ սպասարկութեանց ատակ ոյժերով:

Եւ որպէսզի ազգային բանակի կորիզը կազմող սպայակոյտը փա-րած մնայ հայրենասիրութեան Ա. գործին, անոնց համար, գաղտնաբար, զոհացուցիչ պաշտօններ յատկացուած է զանազան պաշտօնատեսներու մէջ: Եզրակացնելով, կը յաւելու Զօր. Վեյկան թէ, Գերմանիա, որու միակ նպատակակէտն է վրիժառութիւն և համաշխարհային պատերազմի պատճառած կորուստներու լիակատար դարմանում. ներկայիս կազմ ու պատրաստ վիճակի մէջ ունի անկող զինուորական ոյժ մը ու այս ոյժը պի-տի ծառայէ ծրարապէս զէմ մասնաւոր իսկ Եւրոպայի դէմ ընդհանուր կեր-պով կատարելու անաւարտ յարձակում մը:

Ինչպէս Զօր. Վեյկանի նոյնպէս շահագրգռուող տէրութեանց մտա-հոգութիւնը բանաւոր է երբ նկատի առնենք թէ Հիթլերի Ազգայնական-Ըն-կերվար կուսակցութիւնը որ լուծուած խորհրդարանի մէջ 12 ձայն միայն ունէր իսկ ներկայ խորհրդարանի մէջ 107: Մայրաքաղաք Բեռլինը կու-սակցութիւնը ներկայացնող այս հսկայ զանգուածը իբրեւ անյետաձգելի պա-հանջ ունի զանազաններու վերաքննութիւնը, Գերմանիոյ ձերբազատումը միջազգային յանձնառութիւններէ, Աւստրիոյ հետ միացումը, կորսուած հո-գերու և գաղթականներու վերադարձումը, միապետական ընթիմի վերահաս-տատումը:

Հիթլերի յաջողութեան համար միլիոններ տրամադրած են վերջէմ Կայսրը և կայսերական իշխանները, ճարտարարուեստական մեծ հաստա-տութիւնները:

Հիթլերը աւստրիացի նախկին ներկարար մըն է և սակայն հանրային գործիչի տաղանդով օժտուած: Իր քաջատուած հայրենիքին՝ Աւստրիոյ վե-րականգնումին համար Գերման-Աւստրիական միութեան կողմնակից է լի-այայտ ըլլալով որ երբեմնի երկու զօրաւոր կայսրութիւններու միացումը կրնայ սրել ուրիշ անորոշակները և միութիւնը կ'օժտուորուի նորանոր ան-դամներով:

ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅԵՐ

ՊԱՅՔԱՐ ԹԷ ԱՍԲԱՏԱՆՈՒԹԻՒՆ

Մի քանի հօթեանակներէ ի վեր, Հայկալի, Պէյրութի, Գամախուի և ուրիշ երկրորդական կեդրոններու մէջ կատարուած ձերբակալութիւններ և ցրուած թողութիւններ, առիթ ընծայեցին հակահայ պայքար մը մղելու: Տե-ղական թերթեր մեծապէս ազդեցին հանրային միտքին վրայ և մարդ կը հարկադրուի կարծիք թէ ներկայիս հայ համայնապարական կազմակերպու-թիւն մը գոյութիւն ունի հոգատարեալ երկրներու մէջ:

Պատասխանը տալու համար անհրաժեշտ է գիտնալ թէ Խորհրդային Գ. Միջազգայնականը, իր վերջին նիստին մէջ, մեծ զուգահեռներ քուէար-կած է համայնապար բորոյականութիւն, ջանալով անոր ոյժ տալու մասնաւոր կերպով արեւելեան և արեւմտեան այն երկրներու մէջ ուր ի գոյութիւն է Գա-լիլիայիսի կառավարութեանց հեղինակութիւնը:

Մայրաքաղաք Արեւելքին մինչև Փոքր Ասիոյ հոգատարեալ կամ ազա-տագրեալ ազատ երկրամասերը պայքարի և բորոյականութիւն կրկայն ցանցով մը պատկերու ջանացող Գ. Միջազգայնականը, իբրեւ կեդրոն ընտրած է Պաղես-տինը, հոգատարեալ երկրները խորհրդու իր մոլեգին գործունէութեան:

Պաղեստինէն է որ Եգիպտոս, Սուրիա կամ Լիբանան կը յաջողին սպրդել թէ՛ համայնապար գործիչը թէ՛ համայնապար ոսկին, բորոյականութի կերպ անբաժան ու էական գէնքերը:

Հարկ կայ ըսելու թէ ոսկիի ոսկեղնիկ փայլէն շրջած Եգիպտացի երկտասարդ Եգիպտոսի մէջ, Լիբանանցի Լիբանանի, Սուրիացի Սուրիոյ, Իրաքցի Իրաքի, Թունիսցի Թունիսի, Ալժիրացի Ալժիրի, Եսալի, մէջ պարզապէս համայնապար գործիչի ու ոսկիի գործիք ըլլալու տղայամուտ-թեանը, անհանգիստ կ'ընեն սեղակաւ կառավարութիւնները:

Հակառակ ոստիկանական ամենախիստ հսկողութեան, համայնապար գործիչներ, համայնապար ոսկիներու հետ, կը յաջողին մտնել ոչ միայն Եգիպտոս այլ նաև Սուրիա կամ Լիբանան. այս հակադրական մուտքը կը դիւրանայ կեղծ անցագիրներով, վիպական ծպտումներով:

Եգիպտական թերթեր կը պահանջին խիստ հսկողութիւն կատարել սահմանադրութիւններու մէջ և զբաւել համայնապար ընդունել կենսաւետող ոսկիները:

Հարկ չկայ յիշելու թէ բորոյականութի գործին կը նուիրուին ինչպէս Պաղեստինի, Եգիպտոսի կամ այլուր նմանապէս Լիբանանի ու Սուրիոյ մէջ չգտնուող, անպատասխանատու դէմքեր:

ՄԵՐ ԽՕՍԿԸ

ԲԱՆԱՆՔ ՎԱՐԱԳՈՅՐԸ

Ժամանակէ մը ի վեր տեղական թերթերը կը խօսին հայերու վրայ-անոնք կ'ըսեն թէ. «Հայերը հակա-տեղական ուղղութեան կը հետեւն-Հայերը Սուրիական հողի վրայ ազ-գային օժախ կը փնտռեն»-Հայերը համայնապարական հրձիգութիւն կ'ը-նեն», և այլն. ամբաստանութիւններ որոնցմով նոյնիսկ կ'առաջարկեն-«Հայերը անմիջապէս զսպել կամ. . . հեռացնել. այսինքն հայկական գիւ-ղեր ստեղծել ազատ հողամասերու վրայ». և ինչ:

Անշուշտ ամէն տեսութիւն կը յենու տուեալի մը վրայ. և հոս, այդ տուեալները տպուած կը գտն-ենք «ՀԱՅԵՐԸ», «ԳԱՂՔԱԿԱՆ ՀԱ-ՅԵՐԸ» ընդհանուր առումին տակ-բան մը, որ սխալ է, և անարդար:

Ձի պիտի փորձենք յետո մղել բերուած այդ ամբաստանութիւննե-րը. պահ մը ընդունելով, որ մեր մէջ գտնուին տեղական ուղղութեան հակառակողներ, Սուրիական հողի վրայ հայկական օժախ երազողներ, կամ համայնապարական մտայնու-թեամբ տարուածներ. այդ իսկ պա-րագային, արդեօք ներքի պիտի ըլ-լար փոքրաթիւ ու անարժէք բացա-ռութիւններով միայն աչքի առաջ ու-նենալով «ՀԱՅԵՐԸ», «ԳԱՂՔԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ» ամբաստանել ընդհանուր-թեամբ, ու անոր ծուռ վզին ան-գամ մըն ալ գնել թուրք եսթապա-նի անգլոթ սուրը: Արդեօք աւելի քան հարիւր հազար հայութեան մէջ տեսնուող քանի մը տասնեակ հա-մայնապար տղաքը կարելի է հայու-թիւն կոչել ու անոնց պոռոտաբա-նութիւնները որպէս մահացու միջոց գնել աշխատանքի փողովուրդի մը անմեղ վզին: Ո՛րանք են այդ «կրա-կի հետ խաղացող գաղթական հայե-րը». կրնային մեզի անունները տալ, թիւերով խօսիլ, չափն ու հասար-դորդել այդ «երկրին բարոյական ա-ռողջութիւնը խանգարող» պոլլեւիկ հայերուն: Մենք ալ հայ ենք, հինգ տարիներէ ի վեր կը լսենք հայ պոլ-լեւիկներու մասին, և սակայն տա-կաւին չի գիտցանք թէ որո՞նք են ասոնք, և ի՞նչ թիւ ու որակ կը ներկայացնեն անոնք որ «Մոսկուա-յի գործակալները» կողմուրու չափ-այ համբաւ ստացան: Տեսնե՛ք, ճանչցանք միայն, որ հինգ տարինե-րէ ապրիլի ձերբակալուող, աքսոր-ուող, «արձակուող և կրկին բռնուող ու բանտարկուող համայնապարները միշտ նոյն, միեւնոյն տղաքն են, և ուրիշ ոչ ոք: Ուստի, սխալ չիլի-տի՛ ըլլար երեւակայութիւններու դէմ կուռիլը, շարժող հողապաշտներու դէմ նիզակ ճօճելը, և խեղճ ժողո-վուրդի մը անգործութիւնը խանգա-րելը: Աշխարհիս ո՞ր մէկ կէտին վը-րայ՞ ո՞ր մէկ ազգի ու ցեղի մէջ պոլ-լեւիկներ չկան, տկարամիտ բազմա-թիւները չեն գտնուիր: Ինչո՞ւ մի-այն մերը, խեղճ հայութեանը շատ կը տեսնուի, երեսին կը տրուի, և մէն մի հայու մեղքին համար ընդ-հանուր հայութիւնը պատասխանա-տու կը ճանչցուի: Եթէ խնդրինք մէջ թուական համեմատութիւններ փնտռելիք, դարձեալ ամենաքիչ Պոլլեւիկներ, ամենանշուաղ դատար կապտուներ պարունակող հայու-թիւնը, և մասնաւորաբար Սուրի-ականութիւնը պիտի ըլլար: Ասով:

չենք ուզեր պաշտպանել մեր մէջ գտնուող անբաղձալի տարրերը, և ոչ ալ կուզենք քաջալերել անոնց չա-հատակութիւնները, կ'ուզենք և կը պահանջենք որ այդպիսիները ստա-նան արժանաւոր պատիժ, և զսպու-ին երկաթեայ կապանքներով: Բայց երբէք ալ չի պիտի կրնայինք հան-գուրծել, որ մասնաւորներու, ան-հատներու, խմբակցութիւններու մասնակի մեղքերը գրուէին ընդհա-նուր հայութեան վզին: Ու բարդու-էին ու ճնշուէին արեւստական ձե-ւերով: Սխալ չի պիտի՛ ըլլար լուի մը համար վերմակ մը այրելը, կամ քանի մը պոլլեւիկ տղոց համար ազգ մը անբաստանելը: Թող ներուի մեղք ըսել թէ, Թրքական հին մէթոս է այդ, քանի մը «Յեղափոխականե-րու» երեւակայական մեղքերուն հա-մար ամբողջ հայութիւն մը քշելը, գաղթեցնելը, փճացնելը: Եթէ մեր մէջ կան անբաղձալի տարրեր, կայ և հարկը հաղարի հասնող աշխա-տաւոր հայութիւն որ իր աշխատա-սիրութիւնը, իր ուշիմութիւնը, իր քաղաքացիական պարտաճանաչու-թիւնը, վերջին տասը տարիներու ընթացքին գործնականապէս ցու-ցաբերած ու գնահատուած է: Ինչո՞ւ հապա չի տեսնել, չի գնահատել, չի քաջալերել, այդ աշխատաւոր հոծ բազմութիւնը, որ առտուրէն մինչև իրիկուն անխնայ աշխատանք, շինա-բար ոյժ կարտադրէ, չորաբեկ հացի մը փոխան իր սիրան ու հոգին կու-տայ իր նոր հայրենիքին, անհաւատ-ներ, կասկածողներ կան, թող ան-գամ մը իրենք մօտենան անոնց. սեղմին այդ կոշտացած ձեռքերը խորը նային այդ փոսացած աչքե-րուն, և լսեն անոնց անկեղծ ու պարզունակ խօսքը, ճաշակեն այդ մեղրածորան զգացումները՝ որ մօտ ջուրի մը նման կը թրխին բնութեան կոյս ակերէն, և կը հոսին կոշտ ու անտաշ քարերու մէջէն: Ատոնք, այդ սեւ աշխատանքի տակ խանձած ու կոշտացած հայերն են ճշմարիտ հայութիւնը, քննեցէ՛ք զայն իր մօր-թին վրայ, իր շունչէն ու արիւնէն, և եթէ փոխադր կը տեսնուի անոր մասին ու ոսկորին մէջ, այն ատեն մի-այն քշեցէ՛ք, հեռացուցե՛ք զայն ձեր մաքրամաքուր միջնորդէն:

Պէտք է գիտնալ նոյն ատեն, որ մենք այս երկրին մէջ ալ ոչ «Հիթլեր» ենք, և ոչ ալ «ԳԱՂՔԱ-ԿԱՆ ՀԱՅԵՐԸ». այլ հաւասար իրա-ւունքներով և պարտականութիւննե-րով օժտուած տասը տարուան քա-ղաքացիներ՝ ամէն կերպով կապուած երկրի շահերուն հետ:

Անա թէ ինչո՞ւ մենք վեր կառ-նենք վարագործը, նուիրագործելու համար իսկական եղբայրակցութիւ-նը:

ՎԱՐՉԱԿԱՆ Ի ԶԴ

ԲՐՈՃ Ս. Թուվանան վերջ-նականապէս դադարած է «Լի-բանան»ի և վարչութեան հետ կապ ունենալէ, իր կողմէ կա-սարուած կարգ մը գրամական գեղծարարութեան համար գոր-փաստող թուրքերու ծրար ի պահ դրումը էր մեր մօս: Վարչութիւնը իր կողմէ կոտա-րուած գանձումներու համար ու-նէ պատասխանատւութիւն չըս-տանալու:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՍՄԻԹՆԵՐ

«ԻՆՏԻ ԶԷՔ ՀԱՒԱՍԱՐ»

ԷՇՈՒՆ ԿԸ ՀԱՒԱՍԱՐ»

Ինձի պէս տմէն մարդ անխը-տիր գիտէ թէ օր մը Նաւրտտին Խօճայի դրացին իշու մը պէտք ու-նենալով՝ ըստ սովորութեան, Խօ-ճային կը դիմէ խնդրելով որ էջը տը-րամագրէ իրեն:

Խօճայն ձանձրացած դրացիի յա-ճախակի դիմումներէն ու ուզելով վերջ մը տալ անոնց, կը յայտնէ թէ էջը տուելը չէ:

Խնդր դրացին, գրեթէ յուսա-հատ, էրդ գէպի գուռ կ'ուղղուէր էջը կ'արձակէ որոտանման զրոյշը:

Դրացին, ժպտուն ու ոգեւորու-ած, Խօճայի երեսին կը զարնէ իր ստախօսութիւնը:

— Ինձի չէ՞ք հաւատար իշու՞ն կը հաւատաք կը պատասխանէ պատ-րաստարան խօճային:

Ու դրացին միամիտ եւ անտը-րամաբան, կը հեռանայ իրաւունք տալով Խօճային:

Հանրածանօթ այս առակի գրա-ցիին նման միամիտ ու անտրամա-բան մարդեր շատ կան աշխարհի մէջ:

Միեւնոյն և անտրամաբանա-կան հանգամանքով օժտուած կազ-մակերպութիւններ ալ անպակաս են:

Ու խօճային այս ծիծաղելի պատճառարանութիւնը կարելի է լրիւ համեմատել Եօթնասուտ նախնի թու-ականէն ի վեր հայկական խնդրի լու-ծումով զբաղող դիւանագիտական զանազան մարմիններու եւ Թրքա-կան պատրաստաբան քաղաքակա-նութեան միջև մղուող պայքարնե-րու հետ:

Այնքան Խորհրդաժողովներէ դ-ջանքերէ վերջ, մեր դատին անու-ծելի եւ նորանոր լուծումներու կա-րօտ մնալը, միթէ Խօճայի վերադը-եալ պատասխանին բառացի կրկնու-թիւնը չէ՞ մեր իրաւունքները կողող տուողներու կողմէ զանոնք պաշա-պանելու կոչուած եւ սակայն միամիտ դրացիի գերը խաղացող գիւնագիտութեան դէմ:

Ընթերցողը ներողամիտ կըլլայ կարծեմ հայկական արդար խնդրանք ներք նմանցուցած ըլլալու համար Նաւրտտինի չորքոտանի ինքնա-շարժի գոյնը:

Նմանութիւնը գրական է անոր համար ոչ հայկական զատը գոյնի մը ուժգնութիւնը ունենալով հաւ-գործ, գործադրարար անոր արժէքն ալ իրաւացուցած հարց մէջ:

Թէ՛ մի որ երկայնականջ անրա-նը կը գույն անպայմանօրէն, բանա-ւոր և հետեւաբար արդարացի պատ-ճառներով:


Ու առականերու մէջ ներքի է գիմանական ոճը, որով անրան մը բանականի և փոխադարձաբար բա-նական մէ անրանի, կրնան փոխուիլ ստանց իրենց իրական արժանիքն բան մը կորսնցնելու:

ՕՏԵԱՆ ՈՐԴԻ

ԿԱՐԵՒՈՐ

«Լիբանան»ի նորակազմ Վարչութիւնը սկսած ըլլալով շրջանային այցելութեան և կազմակերպութեան, Արաբեէիի քա-ծիքը կարելի պիտի ըլլայ օտս մօտաւոր թիւով հրատարակել:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՀԱՅԿ. ԿԵԱՆՔ

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿՆԵՐՈՒ ՏԱԳՆԱԳԼ
ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ԵՒ ՀԻՒԱՆԴԱՆՈՒ
ՑԻ ՏԵՏՐԱԿԱՆԵՐԸ ԿԵԻՔԻ ՏԱԿ
ԱՌՆՈՒԹՅԱՆ

Ինչպէս երէկ գրած էինք, Պոլսոյ Հայ Կաթոլիկ համայնքէն խուսի մը մարդիկ գրած էին Ընդհ. Գաղութապետութեան և բողոքած որ վարչական խորհուրդը մեծամասնութիւն չունի, բայց կը շարունակէ ինքնազուլէս գործել: Եւ պահանջած էին վերջ տալ այս կացութեան: Ընդհ. դատախազութեան հրամանով, օստիկանական տնօրէնութիւնն ալ քննութեան ձեռնարկած էր:

Կեդրոնէն տրուած հրահանգին վրայ, Բանկալթիի պահակաւորներն օստիկանապետ երէկ առաւ. յաժժա՛մը 10ին, Երբերու ժողովին անդամներուն և Կաթոլիկ ընդհ. ժողովի 8 անդամներուն հետ զննար Ս. Յակոբի հիւանդանոցը և կնքեց բոլոր հաշուետոմարներն ու փաստաթուղթերը:

Օստիկանութեան ներկայացուցիչները յետոյ զացին Պատրիարքարանը և նոյն ձևով կնքեցին բոլոր օստիկանները: Միեւնոյն ատեն հաղորդեցին գիւտնապետ Պ. Լուսաբաբեանի և ընդհ. վարչ. Պ. Արսէրի թէ առժամապէս վերջ տրուած է իրենց պաշտօններուն:

Կառավարութեան ներկայացուցիչները այսօր ալ Ս. Յակոբի հիւանդանոցը պիտի երթան և վարչական առժամայ կարգադրութիւններ պիտի ընեն:

Երբ օստիկանական քննութիւնը վերջանայ, ընդհ. դատախազութեան հրամանով կարգադրութիւն մը պիտի ըլլայ ընտրութեանց ձեռնարկելու և նոր վարչութիւն մը կազմելու:

ԷԶՄԻՍԵՆԻ ԺՈՂՈՎԻՆ
ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

ՅԵՏԱԶԳՈՒՄՍ

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը մասնաւոր գրով մը Պատրիարք Հօր գրած է բոլոր Թեմակալ Առաջնորդներուն իր ուղղած ընթացիկականին պատճէնը, որմէ մեզի կը հաղորդուին հետեւեալ մասերը:

«Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ի նկատի առնելով, որ արտասահմանեան պատգամաւորները վիզի առթիւ գրութիւնները կարող են երկարել և հեռաւոր վայրերէց անկարող կը լինեն արտասահմանեան պատգամաւորները ժամանակին վիզա ստանալ և Հոգեւորութեան 26 ին ներկայ լինել Ազգային - Եկեղեցական Ժողովին, մինչդեռ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ցանկալի է համարուի Ազգային - Եկեղեցական Ժողովը անպայման լրիւ կազմով գումարել, ուստի նպատակաւորաբար է դատուի Ազգային - Եկեղեցական Ժողովը գումարուի յետաձգելը: Այս մասին յայտնել նախ Կիլիկիոյ Ծնորդագարը կաթողիկոսին ծրուագէմի եւ Կ. Պօլսոյ Ամենապաւ Պատրիարքին եւ արտասահմանեան եան բոլոր Թեմակալ Առաջնորդներին, որ առանց աճապարանքի, համաձայն տրուած հրահանգներին կատարեն Ազգային - Եկեղեցական Ժողովին մասնակցելու համար պատգամաւորները (թէ հոգեւորական եւ թէ աշխարհական) ցուցակը ուղարկեն Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին եւ սպասեն Ազգային - Եկեղեցական Ժողովի գումարման նոր ժամկէտ նշանակելուն»:

«Երկրորդ, յանձնարարել համա-միութենական սահմաններում գրտնուած Թեմակալ Առաջնորդներին զաղարեցնել պատգամաւորներին եւ պատգամաւորներին ընտրական գործողութիւնները եւ սպասել նոր հրահանգին»:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իր գործողական գրով կը խոստանայ ի մօտայ հաղորդել լրացնել տեղեկութիւններ եւ բացատրել իր տեսակետը Հայրապետական ընտրութիւնը լրիւ կազմով կատարելու վերաբերեալ:

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Քալիֆօրնիոյ հայերը ներկայ Հայաստանի տանաւորակին առթիւ նախաձեռնութիւն առանձնաձեռն տեղեւոյն գաղթականութեան կողմէ վեց թրաքթըրներ զրկել Հայաստան:

Հանգանակութիւնը, որ պիտի գործէր Հոգեւորութիւն 31 ին, արդէն բաւական յաջողացած է:

ՀԱՅԿԱՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
Ամերիկահայ ուսանողներէն Արա Աւագեան երեք հարիւր տոլարի պարգեւ մը շահած է Պոլսոյ արհեստագիտական վարժարանին մէջ, ուր կը հետեւի ճարտարագետական մեքենագիտութեան:

Յիշատիկի կրկնագործական արտադրութեանց ցուցահանդիսին կը մասնակցին հայեր. ի մէջ այլոց Պ. Հաղարպետեան, որ անցեալ տարի շահեցաւ ամենամեծ մրցանակը, արծաթէ գաւաթ մը:

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՍՏՈՒՆՆԵՐԸ

Ամերիկայի Հայոց «Երես-փոխանական Ժողովը Մեյսեմբեր 14 ին Նիւ Եօքի մէջ նիստովարած եւ Ամերիկայի Հայոց կողմէ յառաջիկայ կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար բացարձակ մեծամասնութեամբ պահանջաւոր ընտրած է Պ. Վահան Քիւրճեանը, Ա. Ն. Նազար եւ Մարգարէ Պէրպետեան: Եկեղեցական պատգամաւոր պիտի ընտրուի Եկեղեցական Համագումար Ժողովին կողմէ:

Քալիֆօրնիոյ Երեսփոխանական Ժողովը իբրեւ առանձին թեմ պահանջաւորներ ընտրած էր Պ. Յակոբ Նեփիեանը եւ Սողոմոն Պոսթանեանը:

ՀԱՅ ԿԱՔ. ԿԵԱՆՔ

Գրքերը Խանի Լազարիսներու վանքը եւ վանքապետական կառուածները փոխանուած են Յիսուսեան Միաբանութեան: Ամուսն Երեմիայի Գրքերը Խանի մեկնած են Բէր Պրենան իբրեւ վանահայր կամ մեծաւոր, Բէր Սքոլմանը, Բէր Թալլոն, Բէր Յովսէփ Գալիքեան, Բէր Սքոլմանը կատարուած է Լազարիսներու Գրքերը Խանի քաջութեան պատճառաւ:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅՍՏԱՆԻՆ

Անդրկովկասի ջրային տնտեսութիւնը միջոցներ ձեռք առած է Այդըր լիճի մեքենական կայանը ուստիստիկաբար համար: Խնդիրը սա է. Այդ լիճին ջրան կայանը պէտք է ունենայ 6000 հէքթարէ աւելի հող մինչդեռ իրականութիւն մէջ միայն 25000 հէքթար կ'ուղղէ:

ԵՐԱՆԻՍ ԿՆԱՍԸ

Յուլիս 10ին իվեր անձրեւ չէ տեղացած Ստեփանաւանի ջրանիւն մէջ երաշտէն մեծ չափով տուժած են արեւածաղիկ եւ գետնախնձորի ցանքերը: Գիւղացիները ստիպուել են 20 օր առաջ հաւաքել գետնախնձորները: Աշխատավարձը դանդաղ կ'ընթանայ: Ցանքը կ'ուշանայ, որովհետեւ հողը խոնաւ չէ:

Սեպտեմբերի սկիզբէն գիւղերները ջրմուկները գէրօ աստիճանի կ'ընեն:

ԵՐԵՒԱՆ - ՍԵՂԱՆ ԵՐԿԱՐՈՒՂԻՆ
Ինչպէս յայտնել է, Հայաստանի կառավարութիւնը դիմած էր Անգլիոյ վարչական իշխանութեան և պնդած որ փութացուի Երեւան-Սեղան երկաթուղին կառուցումը: Ծանօթ է նոյնպէս, որ Անգլիոյ վարչական իշխանութիւնը, իսկ հայկ. կառավարութիւնը առարկած է թէ սխալ են անոր եզրակացութիւնները:

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ՏՈՒՆ

Ջարմանքով կը տեղեկանանք ու ակնատես կ'ըլլանք որ Նահրի Պողոտիկեան Եղբարց սիկոսի գործարանի վերնայարկը կը ծառայէ թէ իբրեւ եկեղեցի և թէ իբրեւ տուն: Ասիկայ մեզի կը յիշեցնէ քեմիկոս փայտուշէն տուններու մէջ բուհիական հաւաքութիւնը:

Կասկած չկայ թէ այս խնդրին մէջ կրօնականներն աւելի ներթափանցողական կ'այ:

ՏԵՂ. ԼՈՒՐԵՐ

ԿՐԹԱԿԱՆ ՎԵՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Կրթական նախարարը պաշտօնական շրջաբերականով պահանջած է Լիւանանի բոլոր պատկան պաշտօնէրէն իր նիստը անցնել Երեւան կրթական մարման վիճակագրութիւնները:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԻՍՏԸ

Հակառակ կանխաւ կատարուած յայտարարութեանց Խորհրդարանը չի կրցաւ գումարել իր նիստը անցնել չարաթ օր, մեծամասնութիւնն զոյացած չ'ըլլաւ: 45 երեսփոխաններէն 4ը միայն պատասխանած էին նախագահի հրահանգին:

ՖԻՆԱՆՍ. ԶԲԱՍԱԳՐԱԿԱՆԵՐ

Ամուսն 6 ին Գշ. օր երեք Ֆրանսական ջրասաւառակներ Թուրքիոյ Պիլլերթ նաւահանգիստէն Պէրսի հասան:

ԲԱՄՊԱԿԻ ԳԻՆԸ

Պէյրութի Մաքսատան վարչութեան մօտ գիտուած կատարուած է բամպակի և բամպակեղէն ապրանքներու մաքսային սակին վրայ 12 առ հարիւր զեղը մը ընել նկատ: Ունենալով աշխարհի ամէն կողմանոց գինեւորներն անկուշտ:

Կը տեղեկացուի թէ Մաքսատան վարչութիւնը միջոցաւոր պատասխան տուած է:

ԳԱՆՔԱԿԱՆՆԵՐ ԿՈՒԳԱՆ

Ամուսն 6ին «Գիւղացի» շրջանաւոր Պէյրութ ժամանած են 80 գաղթականներ որոնք կը վերադառնան Հայ. Ամերիկային:

Անգլիական Զրահաւորներ

Մեկնած
Անգլիական հինգ զրահաւորներ, որոնք Պէյրութ առջեւ կը գտնուէին շարաք մը իվեր ամուսն 6ին առաւօտեան մեկնեցան:

ՀԱՅԵՐՈՒ ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ

Տեղական թերթեր, որոնց կարգին «Միջին», կը պահանջեն որ մայրաքաղաքներու ու երկրորդական քաղաքներու մէջ հաստատուած հայ զանգուածներ մեկուսացուին Արեւելեան Սուրիոյ շրջանին մէջ շինուած գիւղերու կամ քեմիկոս մէջ իսկ խաղաղարներ երկրէն արտաքսուին:

Այս հակառակ բրթականութիւն պատճառ կը նկատուի հայերու կողմէ հետապնդուած համայնավարական բրթականութիւնը: Մաքսատանում կատարուելի սկիւղ Պէյրութէն:

Մ. ի. Վատահ ենք թէ հոգաւոր ու տեղական կառավարութիւններ իրենց մարդասիրական ծանօթ արամագրութիւնը ցոյց կուտան իրենց հովանիին ներքեւ ապաստան գտած ու տեղացի իրաւունքներով օժտուած հայերու հանդէպ: Բուն յանցաւորները պատժել արգարութիւն է:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՒԴՆԵՐՈՒՆ

Մեր յարգելի բաժանորդներէն կը խնդրուի որ առաջ տեղեկացնել մեզ բրթի. Մ. Թուրքիոյ Յուլիս և Օգոստոս ամիսներու ընթացքին ստացաւ իր փոխան կամ առանց ստացաւ իր տրուած բաժանորդագիններու հաշիւը:

ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՋԴ

Բնակավայրը և հասցէն անծանօթ ընդ Ատանայի Ովսաննա երկաթգիծին ծնեալ Թաշեանի գէմ իր ամուսնոյն Յովհաննէս Երկան-հարսեանի կողմէն Խորհուրդին առջեւ ընտանեկան դատ մը բացուած ըլլաւ, ներկայ աղղարարագիրով յիշեալ Ովսաննա երկաթգիծին կողմէն կամ օրինաւոր կերպով նշանակուած փոխարինող մը միջոցաւ ներկայանայ Խորհուրդին 930 Նոյմ. 19ի Գշ. օրուայ կէսօրէն վերջ ժամը 3 ին գումարուելիք նիստին, հակառակ պարագային ի բացակայութեան պիտի ձեռնարկուի դատական քննութեան:

Դատաւարական Խորհուրդ
3-2 Հայոց Կրթական

ՄԻՀՐԱՆ ԱՂԱԶԱՐԻԱՆ

ԲԱՑԱԾ Ե ԻՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵԶ

ԳԻՄԵԼ. — Mihran Aghazarian B. P. 606 Beyrouth

10—8

[Gr. Liban]

ՄԻՀԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲՈՒՆԱԿԱՆ արտադրութեանց դէմ

Յիշատ. նախարարական խորհուրդը որոշեց րուսական կարգ մը արտադրութեանց ներածման համար սալ հարկ եղած արտադրութեան:

Ինքնաշարժը Ֆրանսայի մէջ

Հացկերոյթի մը միջոցին վաճառականական նախարար Պր. Քլանտէն յայտնեց օրօսպիւնեւ 30 տարուան մէջ քրած յառաջդիմութիւնները յայտարարելով թէ ներկայիս Ֆրանսա ունի 1,296,167 ինքնաշարժներ եւ կը ներկայացնէ աշխարհի ինքնաշարժի տուականները:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Ազգայնականներու տօնին օրը Պողոս Սաղաւարտ կուսակցութեան անդամներէն 100,000 հոգիներ քափօք մը կազմեցին:

Ազգայնականներու լիսր Պր. Հիթլեր յայտարարեց թէ Գերմանիա ոչ թէ համակիր այլ հակակիր է պոլեմիզմի ու այս ի մօտ իր երեսուն պիսի գալ:

Իլլիմ գաւառութեան մեղակցութեան յանգանակով Լայքիկի դատարանը Բայալէի 3 սպաները դատաւարեց 18 ամսուան բերդարգելութեան:

Պր. Հուլլըր եւ տնտես. տագնապ

Դատաւարանը Ընկերութեան մէջ տնտ. տագնապի մասին հաւ մը արտասանելով Պր. Հուլլըր յայտարարեց թէ երբ դատաւարներ վստահութիւն ունենան յանապառհարներու հանդէպ, տագնապը տուով կրնայ վերջանալ:

ԲՈՒՆԱԿԱՆ - ԹՈՒՐԿԻԱ

Թուրքիոյ Ար. Գործաւար Թէվֆիկ Բիւլէի պէյ մեկնած է Մուսկովայէն ու յայտարարած թէ րուսական պետական անձնաւորութեանց հետ իր տեսակցութիւնները լաւ արգիւնք տուած են. Բուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ կատարեալ համաձայնութիւն կը տեսնուի միջազգային բոլոր հարցերու տուր:

Թուրքիա. Մ. Քեմալ կը թողու

Ն ա ի խ գ ա հ ու թ իւ ը ը

Խորհրդարանի վերաբանութեանց ընթացքին խնդրոյ առարկայ եղած է բացի հանր. պարտէրէ Ղազիի նախագահութեան հարցը: Ղազիին, Իսմէթ փաշայի եւ Ֆեթիի պէյի ներկայութեան, «Ազգամի» Տնօրէնին յայտարարած է թէ պատրաստ է ընդունելու Դաշիիի նախագահութիւնը, Հանրապետական նախագահութեան հրաժարելու պայմանաւ:

Դաշիիին վստահութեան փութ կ'ուտայ

Արտաւարգ նիստի մը մէջ Ազգ. Ժողովը 12ի դէմ 149 ձայնով վստահութիւն յայտնեց Իսմէթ փաշայի Դաշիիին. Ընդդիմադիրները Ֆեթիի պէյի կողմնակցներն էին:

Պարսկաստան երկաթուղի կը շինու

Պարսկի կառավարութիւնը վաւերացուցած է երկաթուղի գիծի շինութեան ծրագիր մը, սրամագրելով 9 միլիոն տարեկան րուսական հիւսիսային իսկ 11 միլիոն րուսական հարաւային գիծերու համար:

Օղային ահուելի արկած

R. 101 բոցավառած 50 մեքենաներ որոնց մէջ օղային նախարարը անգլիական R. 101 օդանաւը Հնդկաստան երթալու ատեն Ֆրանսական Ուազ դաւառի Ալլոն քաղաքի շուրջ ինկած է և ինչպէս ատեն րուսկան 50 զոհեր կան որոնց մէջ է նաեւ Անգլիոյ Օղային նախարար Պր. Թոմսըն. 8 հոգի միայն ապաստուած է:

Օղանուր տեղեւ շարաք օր երեկոյն Գարսիկիստէն ժիւնած էր և երկուշարթի տառաւոր ժամը Պին Իսմայիլի պիտի հասնէր: 58 ճամբորդներ միայն տուած էր, թէ կրնար աւելի մեծ թիւով առնել: Ծամբորդներու մէջ էին Օղային նախարար Պր. Թոմսըն, Սիր Ալֆրէտ Պրանքեր, աւստրալիան օդանաւորութեան պետը: Հինգ սպաներ և 37 նաւագներ: Օղանուրէն հրամանատարն էր տեղակալ Իրվին իսկ փոխանորդը՝ ձոնսըն:

Չորս օրուան պաշար տուած էր և Իսմայիլիէն Քարաշի պիտի մեկնէր նոր պարէնաւորութով:

Պր. Թոմսըն կը յուսար Հոկտ. 19էն առաջ Լոնտոն վերադառնալ, փոխադրութեանց շուրջ կատարուելիք կայսերական ժողովին մասնակցելու համար:

ՆԵՄԱՐԻՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

ՄՈՐԻՏՆԵՐՈՒ

ԲՐՈՐԱԿԱՆՏԸ

Մորմոններն այս պահին են խիստ բարձրացած, և անտանի Մորմոններ կայացուցին Տօթ. Վերջագ, որ այս պահին հիմնական Պրեկատ Երեւելի փեռան է, սկսած է քարոզութեան:

Հետաքրքիր մը հարցոցում է թէ իրաւականութիւնը պիտի յառաջ գիւն:

— Տարակուս չկայ, պատահաւորաբար է Մորմոն անաքեալը:

Հաւատացեալները և օտարականները ալ թոյլ պիտի չլսեն, միւս ուսուցիչ, բազմ շինել, շատ ապրիլ չկայ: Մորմոնները միւս Կոնգրէս 6 տարի ունի կապիտին: Չորս եկեղեցի պիտի շինեն Լոնտոնի մէջ:

ԳՐՈՇԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ

Սկսած 7 ի Պէրկատի մէջ 15-0000 հոնդիսականներու և գանաղան տէրութեանց հերկայացուցիչներու հերկայութեան երկօրացիութիւնը քանակաւ իշխանի ծննդեան տարեգրքին առթիւ, կատարուած է մեծ զօրահանգէս: Երբ միջոցին Սերպ Գրօշը ծալուած ու անոր յաջորդած է Երկօրացի Գրօշը:

ԱՆՆԱՐԱՆԻ ՏԱՐԻՐԸ

Գերմանացի բժիշկ և Վիլհելմ Կայսեր քիմիական հետազոտութեանց հաստատութեան Տնօրէն Տօթ. Հաւառ Բրական գիւղական կառավարիչներ կայացուցած է հաշիւ մը որով երկիրը 300000000 տարեկան է և 200000000 տարեկան է ի վեր հաստատուել փոխել մը առած է: Տօթ իր հաշիւը հիմնած է երկրագունդի կապարի հանքին վրայ որ իւրանիումն է և թօրթումն առաջ եկած է և սպասած իր ունեցած յատկութիւնը: Իր հաշիւով այդքան կապար 3 միլիարտ տարուան մէջ միայն կրնայ գոյանալ: Մարդիկ 30 տարեկ ի վեր ծանօթացած են Բաթիումի:

ԻՆՁԵՐ ԿՆԵՆ ԵՆԱՄԱՐԱՆՈՒՄԸ

Այստեղի էն նախապաշարեալ ժողովուրդներու առաջինը կարելի է նկատել Ձիւնացիները, որոնք կը հաւատան հրէշներու, գիւններու, ուրուականներու գոյութեան:


Այսպիսիները Հոնան գաւառի մէջ զորոյց մը ելած էր, մօրուաւոր Վիլհելմ մը շուրջ որ տեսնուած էր ջրհորի մը մէջ: Բոլոր գիւղացիներ հաւաքուելով կը պարպեն ջրհորի ջրերը մեծ գգուշով խնայելով և ինչ տարօրինակ բան, ջրհորին յատակին վրայ կը տեսնուի իր արտաքին երեսօնով փշաղի մը չափ տարակուսօրէն ուսուցիչ մը զրկուել:

ԿԱՐԴԱՅԷՐ

ԵՒ ՏՆԱՐԱՆՆԵՐ

«ԼԻԲԵՐԵ» ՀԱՅԱՍՏԱՆԻ

GRAND HOTEL CENTRAL



ԿՐԱՆ ՕԹԵԼ ՍԱՆԹՐԱԼ

Հաշիւի առաջնակարգ Օթէլներն մէկը ուր պիտի գտնէք:

— Յոյժ փափկանկատ և ազնիւ սեփականատէր մը:

— Օգտուել և ճանճել ու մուկի տիրապետութեան ազատ 70ան:

— Հանգստաւէտ և իշխանաւարտ անկողիններ:

— Պաղ ու տաք ջուրներու բազմութիւն և առաջ:

— Եւ ի լրումն ամենեցուն խիստ հաճելի սպասարկութիւն:

Անգամ մը միայն փորձեցէք ու պիտի հրապուրուիք:

Directeur Propriétaire

Տէր և Տնօրէն

MIHRAN MAMPERIAN

ՄԻՀՐԱՆ ՄԱՄՔԵՐԵԱՆ

Bab-el-Faradj Alep - Syrie

Պապ-Էլ-Ֆարաճ — Հաշիւ

ԿԱՐՍԺ ՕՐԻԱՆԹԱԼ

ԹԱՊԻՊԵԱՆ ԵՂԲԱՐԲ

Իրենց սեփական կարածի մէջ կը նորոգեն, կը ներկեն և իրենց նախնական փոխակին կը վերածեն ամէն տեսակ օթներ և երկաթէ գործեր:

Կը կատարուին օթներու լուսացք անոնց համար տրամադրուող գիշեր ցերեկ սպասելու տեղ:

ՅՈՅԺ ԳԻՐԵՍԵՏԶԻԱՆԻ ԳԻՆԵՐ

ԻԿՆ ՄԵՏ ԵՒ ՇԵՂԻ ՊԵՆ ԳՈՒՐ

Առանց վարանումի զիմեցէք ու գոհացում պիտի գտնէք:

Հասցէ. — GARAGE ORIENTAL, TABIBIAN FRÈRES

Rue el Arz (Saifi), Beyrouth

24-3

ԳՐԱՎԱՃԱՐ-ԴԵՂԱՎԱՃԱՐ

Ս. ՆԱՃԱՐԵԱՆ

ՆԱՂՐ — ԹԻՐՈ ՓՈՂՈՑ

Գրական. Գիտական. Վիպական և ամէն տեսակ Դասագիրք. և զանազան քերթեր:

Կը լրտեսուի «ԼԻԲԵՐԵ» հայաթիւրի և «ԼԻԲԵՐԵ» ՏՊԱՐԱՆԻ մէջ պատրաստուած Հայաստանեան և ալէն տեսակ տպփերու ու պարկերու:

Ընդ միջիւրդ զիւրու, անուշահոտ օծանակներու ինչպէս նաև ԱՄԷՆ գոյնէ մագի ներկերու:

ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ԾԱԽՈՒԻ

Անանեան Գրատուն Պէրկատ

Մ. Նաճարեան « Նահր

Տօնիկեան Գրատուն « (Բէմ)

Բարսեղ Շահինեան Դամասկոս

ՎԱՐՁՈՒՐ ՏՈՒՆ

Յոյժ առողջապահական սենեակ մը, յարակից խոհանոցով, բաղնիքով, պարտէզով և սրահով վարձուէ:

Դիմել Լիբանանի Տպարանը:

Կ'տանձնէ Տպարանեան կամ Հարատարակական ամէն տեսակ գործեր:

Յոյժ գիւրամասցի ԳԻՆԵՐ

ՊԱՆՏՐՈՒՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՅՕԴ. 35. — Յանգանքի մէջ բռնուող ամէն մաքսանեղ մասնաւոր տեղեկագրով մը կը յանձնուի ոստիկանական կամ ժանտար-մըրիի ամենամօտ պահականոցին և նախնական հարցապնդումներէն քըտան և չորս ժամ վերջ կը զրկուի հաշտարար դատարանի: Եթէ մաքսանեղը որոշ քանակութիւն կը տրամադրէ, հաշտարար Առեւտրի դատարանի կողմէ անժամեայ բանտարկութեան վճիռ կը տրուի և երեք օրուան մէջ անոնց պալատնաւորութիւնը կ'ունենայ: Եթէ հաշտարար անանի դատարանը երկար բարակ քննութեանց հարկ զգայ, տրամադրուող բանտի մէջ պահելով զանազանութիւնը յաջորդ նիւթ:

տին կը յետաձգուի:

Եթէ որոշ բնակավայր ունենալուն պատճառաւ ամբաստանալը տրամադրուի հարկ ըլլայ, դատարանութիւնը տասնեակնեղ օրուան ընթացքին կը կատարուի պատկան գաւառի կողմէ: Եթէ յանգանքը ոճիւր է ամբաստանալը կը զրկուի պատկանած գաւառանիւն:

ՅՕԴ. 36. — Երեւմտեան Գրանիւրի և Երեւմտեան Նախարարութեան կողմէ նշանակուած պաշտօնեաներ իրաւասու են իրենց ուղղած ժամանակ մտնելու և քննութիւն կատարելու գործարանի, վաճառատան, խանութի, մթերանոցի մէջ ինչպէս նաև անոնց մէջ գտնուող աշխատանք սենեակի և մթերանոցի մէջ:

Հետեւաբար գործարանի և մը-

թիւնները տեղերը, և վաճառորդներ ինչպէս նաև ծխախոտ մշակողներ նմանօրինակ խնդրի մը առթիւ իրենց մօտ կ'առնուող շինուած կամ չշինուած ապրանքներու տոմարները գեկուցողներն ու բոլոր վաւերացողները ցուցնելու պարտաւոր են:

ՅՕԴ. 37. — Եթէ յիշեալ պաշտօնեաներ, գործարանի, մթերանոցի տեղերու, վաճառորդներու և ծրարած անկողնու տուններուն մէջ գաղտնի ծխախոտ կամ սիկառէթ գտնուելու մասին կ'ապագայի, իրաւունք ունին մտնելու: Միայն թէ տեղեւոր մուկարին ներկայութիւնը անհրաժեշտ է, հակառակ պարագային ամէն գործողութիւն անվաւեր կը նկատուի:

ՅՕԴ. 38. — Եթէ երեւմտեան Նախարարութեան կողմէ այս գործի համար նշանակուած քննիչներն ու պաշտօնեաները նախադատ Առեւտրի դատական մարմնի առջեւ երգուծ կատարած չեն, 35, 36 և 37 յօդուածներու տրամադրութեանց չեն կրնար գործադրել:

Այս երգուծ ի պօրու է որքան ատեն յիշեալ պաշտօնեաներ իրենց պաշտօնին վրայ գտնուին:

ՅՕԴ. 39. — Երեւմտեան վարչութիւնը, օգուտ մը տեսած պարագային, դատարանի վճիռը չտարուած երգուծներու հետ հասկացողութեան կրնայ գալ: Այս պարագային երեւմտեան վարչութեան գեկուցող ստացող յատարաններ (միւս) չեն վերաբնդիւն տեսնալ ամբաստանալի գէմ օրինական հետապնդումները մէկի գեկուցող, եթէ արտաքիններ կան, կարծախն: Եթէ հետապնդումները ոճիւր վերաբերեալ արարքներու շուրջ են, այս հասկացողութիւնը կը մնայ առանց ազդեցութեան:

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՄԱՍ

ՅՕԴ. 40. — 2, 5, 7 և 12

յօդուածներու տրամադրութեանց հակառակ գտնուողներ 5էն 25 ոսկի իսկ երեք տարուան մէջ իրենց յանցանքները կրկնողներ 25էն 100 տուրիական ոսկի տուգանքի կը դատապարտուին:

ՅՕԴ. 41. — Ով որ իր բերքերը կը պահէ կամ 20 առ հարիւր պահա ցոյց կուտայ, պահած ծխախոտը պիտի գրաւուի և առաջին երկրորդ անգամի համար իւրաքանչիւր քիւլի համար 1 տուրիական ոսկի պիտի տուգանք վճարէ: Եթէ երեք տարուան մէջ անիւր յանցանքներու մէջ գտնուելու հաստատուի, իւրաքանչիւր քիւլի համար 5 տուրիական տուգանք պիտի վճարէ:

ՅՕԴ. 42. — Կանոնադրի տրամադրութեան հակառակ ըլլալով փոխադրուած ծխախոտներ պիտի գրաւուին իսկ իւրաքանչիւր քիւլի համար հարիւր տուրիական Դահեկան կը գանձուի:

(Տար.)

Գ Ո Ր Ծ Ա Ծ Ե Ց Է Ք

Նազուպեան Եղբայր Եւ Գապանի Ընկերութեան Սոցիալ-պահական, խնամքով պատրաստուած և զիւրազրի սիկառէթներ, որոնք օժտուած են անմիջեւ առաւելութիւններով: Դամասկոսի միակ Հայկական Սիկառէթի Գործարանը կատարելապէս գոհացում կուտայ ծխախոտներու պահանջին:

Դիմեցէ՛ք, Դիմեցէ՛ք, Դիմեցէ՛ք

ԵՄԱՂՈՒԿԵԱՆ ԵՂԲԱՐԲ ԵՒ ԳԱՊԱՆԻ ԸՆԿ.

Հասցէ ԲԻԻ ԲԱՄԻ ՆՈ. 36 ՏԱՄԱՍԿՈՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԲԱՆԱՆ ԿՈՏԱՎԱՐԱՏՈՒՆ ԹՈՐՈՍ ՀԱՃԻ ԳԵՈՐԳԵԱՆ



Կանանց, արանց և փոքրիկներու համար ոյժ նորաձև և ամէն տեսակ կոշիկներ ապագայութեան համար պատրաստ, ՅՈՅԺ ԶԱՓԱԿԱՆ ԳԻՆԵՐ ԵՒ ԴՏԱՊԱՊԱՆ ԳՈՐԾ: Հասցէ Վաշիա պու ձէմիլ Պէրկատ:

ՅԱԿՈՒԵԱՆ ԵՂԲԱՐԲ ՍՈՍԱՆԱԿԱՐԳ 3 Ա Յ ԶՈՒՆԱԳՈՐԾ



Կը ձուլեն ամէն տեսակ կողակտներ գործիչներ, կը ծախեն և կը նորոգեն ԲՐԻՄԻՍԻ ամէն տեսակ գործիքներ: ԶԵՓԵՆՈՐ ԳԻՆԵ ԵՒ ԻՆՇՏՐՈՒՄ ԵՒ ԵՆՏԵՆԻԿ: ՀԱՍԵ ԹԱՐԻԳԵԼ ՇՍՍ ԹԻ 96 ՊԵՐՈՒՅ

ՏՊԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆ

Վկայեալ Lauréat նախկին Interne և այժմ Chef de clinique Ֆրանսական Համալսարանի հիւնդանցի ԱԶԻ, ԳԹԻ, ԱԿԱՆՋԻ, ԲԵՐՆԻ, ԿՈՎՈՐԻԻ և գլխի բաժնիմ:

Հիւնդ կ'ընդունի կէս օրէ վերջ ժամը 2-6 Rue de Damas Նո. 15 իր դարմանատունը և ի հարկին կը փոխադրէ հիւանդանոցը:

Վկայեալ աղիւսները ձրի: 12-9

ՏՊԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆ

Պուրճ - Իթալի Փողոց Թիւ 9 = Պէրկատ

Կը պատրաստուին ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԻՏՈՑԻՆԵՐ. — Տնտեսի, Դիւր (զպրոցական, գրա կան ու վիպական):

ՀԱՅԱՆԵՆ, ՅՐԱՆՍԵՐԵՆ, և ԱՐԱՅԵՐԵՆ. — լեզուներով. կատանձնէ Տպարանեան կամ Հրատարակչական, ամէն տեսակ գործեր երեք լեզուներով, նաև առեւտրական ամէն տեսակ գործեր ինչպէս նաև Հարսանեկան Հրատարակչութիւն:

Տուփի գործատուն Կը պատրաստուին: Շաքարի, Լօգուտի, Շօքուտի, Կոշիկի, Դիւրանի, Շաքարի ԱՄԷՆ Տեսակ տուփեր քառուր և պատկերներ:

Յոյժ դիւրամասցիկ պայմաններ և ինքնաշարժ քանակային գործ:

Հանի Պալեան և Եղբայր ԶԱՓԱԿԱՆ ԶԱՑ ՈՍԿԵՐԸ

Կը պատրաստեն ամէն տեսակ նուրբ ու գեղարուեստական զարգեղներ, ապարանջան, մատանի, պոշներ, օղ և այլն: X X Յոյժ գիւրամասցիկ պայմաններ և կատարեալ ճշգրտութիւն: X X Հասցէ, ՊՈՒՐՃ - Ոսկերչներու շուկայ Թիւ 81 = Պէրկատ